



1. Վարժություն – Պատճառների վերլուծություն՝ պահածոյացված ձկնամթերքի արտադրության տարբերակների ընտրություն Նախնական տեղեկատվություն

Ստորև բերված գծապատկերը ցույց է տալիս ընկերության համակարգի հիմնական մուտքերն ու ելքերը՝ ձկան պահածոյացման գործընթացում (հաշվարկված 1տ ձկան համար): Ցուցադրված են նաև էներգիայի և ջրի մուտքերը. ջրի մուտքն այս գործընթացում համարվում է օժանդակ նյութ, քանի որ այն անհրաժեշտ է պահածոյացված արտադրանքի հիմնական հումքի հետ շփման համար:




2. Տեխնոլոգիական գործընթաց



Նյութի հոսքի վերլուծությունից հետո խոշոր կորուստները կապված են հումքի (ձկների) հետ և առկա է երկու հիմնական ուշադրության կետ՝ ձկների նախնական մշակում և կտրատում/մաշկ: Այս երկու պրոցեսները նույնպես էներգիայի օգտագործողներ են՝ գոլորշու տեսքով: Նախնական պատրաստումը կատարվում է գոլորշու միջոցով՝ բաց

Action implemented by:



տարաներում: Խոհարարության սարքավորումները բաց են, և ոչ լավ մեկուսացված (գոլորշու տեսանելի մեծ կորուստներն ակնհայտ են):

Պատրաստման գործընթացում ստացված հեղուկը պարունակում է լուծված ճարպեր և սպիտակուցներ (վերամշակված ճարպոտ ձուկը պարունակում է 7 գ յուղ մեկ կիլոգրամի հաշվարկով): Պատրաստման հեղուկները թափվում են կեղտաջրերի մեջ (առկա է արդյունավետ ջրահեռացում, որը հավաքում է յուղի բարձր պարունակությամբ բոլոր կեղտաջրերը, իսկ ճարպը պարբերաբար հանվում է ջրի հոսքով և ձեռքով):

Արտադրամասը չունի կեղտաջրերի մաքրման կայան, առկա է միայն ճաղավանդակ/էկրան:

Հաճախ արձանագրվում էր արտադրանքի անհամապատասխանություն (հավանաբար պայմանավորված է ձկան հումքի շատ եփմամբ և կամ ձկան հումքի ցածր որակով):

Առաջադրանքներ



- **Բացահայտեք նպատակային գործողությունների (կտրտման / մաշկազերծման և նախնական պատրաստման/եփման գործընթացների) կորուստների պատճառները՝ կենտրոնանալով հումքի վրա (ձուկ):
Ներառեք էներգիայի հոսքերը: Օգտագործեք «ձկան կմախքի» սխեման (ստորև):**
- **Նախորդ քայլում հայտնաբերված յուրաքանչյուր պատճառի համար ընտրեք կորուստների նվազեցման տարբերակներ:**
- **ՁԵՐ ԽՆԴԻՐՆ ԱՅՍ ՓՈՒԼՈՒՄ ՉՊԵՏՔ Է ԼԻՆԻ ԳՏՆԵԼ ԻՐԱԳՈՐԾԵԼԻ ՄԻՋՈՑՆԵՐ, ԱՅԼ ԸՆԴՀԱԿԱՌԱԿԸ ՈՒՆԵՍԱԼ ՀՆԱՐԱՎՈՐԻՆՍ ՇԱՏ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ**
- **Քննարկում**



Action funded by
the European Union

EU4Environment

Armenia, Azerbaijan, Belarus, Georgia, Republic of Moldova, Ukraine



Action implemented by:

